ԵՐԿԱՐԱՁԳՎԵԼ Է ՓԱՍՏԱԲԱՆԻ ԱՐՏՈՆԱԳՐԻՆ ԵՎ ՎԿԱՅԱԿԱՆԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ ՊԼԱՍՏԻԿ ՔԱՐՏ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԺԱՄԿԵՏԸ

30.04.2018 18:55

Հարգելի փաստաբաններ,

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի 01.03.2018թ. թիվ 106-Լ որոշմամբ **«Փաստաբանի արտոնագիր և վկայական տրամադրելու» կարգում** (**այսուհետ՝ Կարգ**) կատարված փոփոխություններով սահմանվել է **փաստաբանի արտոնագրին և վկայականին փոխարինող պլաստիկ քարտի** տրամադրման կարգը:

2018 թվականի մարտի 1-ի դրությամբ գործող փաստաբանական գործունեության արտոնագիր ունեցող փաստաբանների համար Կարգով սահմանվել է փաստաբանի արտոնագրին և վկայականին փոխարինող պլաստիկ քարտն անվճար ստանալու հնարավորություն՝ Կարգով սահմանված ժամկետում դիմում ներկայացնելու դեպքում:

ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 30.04.2018թ. թիվ 199-Լ որոշմամբ 01.03.2018թ. դրությամբ գործող փաստաբանական գործունեության արտոնագիր ունեցող փաստաբանների կողմից արտոնագրին և վկայականին փոխարինող պլաստիկ քարտ ստանալու դիմումը ներկայացնելու համար Կարգով սահմանված ժամկետը ԵՐԿԱՐԱՁԳՎԵԼ Է ՄԻՆՉԵՎ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 30-Ը ՆԵՐԱՌՅԱԼ:

Պլաստիկ քարտ ստանալը փաստաբանին չի զրկում իր վկայականը և արտոնագիրը զուգահեռ օգտագործելու իրավունքից:

Բեռնել «Փաստաբանի արտոնագիր և վկայական տրամադրելու» կարգը.

** Կարգի վերջին ինկորպորացիան՝ 30.04.2018թ. դրությամբ*

Բեռնել փաստաբանի արտոնագրին և վկայականին փոխարինող պլաստի քարտ ստանալու մասին դիմումի ձևաթուղթը.

Առաջարկվող նորություններ

02.03.2018ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐՆ ԱՅՍՈՒՀԵՏ ԿԱՐՈՂ ԵՆ ՈՒՆԵՆԱԼ ՓԱՍՏԱԲԱՆԻ ԱՐՏՈՆԱԳՐԻՆ ԵՎ ՎԿԱՅԱԿԱՆԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ ՊԼԱՍՏԻԿ ՔԱՐՏ

14.07.2018ՓԱՍՏԱԲԱՆԻ ԱՐՏՈՆԱԳՐԻՆ ԵՎ ՎԿԱՅԱԿԱՆԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ ՊԼԱՍՏԻԿ ՔԱՐՏԸ ՓԱՍՏԱԲԱՆԻՆ ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ՏՐԱՄԱԴՐՎՈՒՄ Է

ԱՆՎՃԱՐ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })